ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 223

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի,84-րդ հոդվածի 2-րդ մասի , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի N 21-Ն որոշումը որոշում եմ՝

1. 2020 թվականի դեկտեմբերի 07-ին Վերին Պտղնի համայնքապետարանի շենքում հրավիրել հանրային բաց լսումներ՝ Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի և համայնքի տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ:
2. Հաստատել Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի և համայնքի տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն N1 և N 2 հավելվածների:
3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամ՝ Նարինե Շառոյանին:
4. Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Զուրաբյանին
1) համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Վերին Պտղնի համայնքի 2021թվականի բյուջեի և համայնքի տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
2) համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակել համայնքի 2021 թվականի բյուջեի նախագիծը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

20 20թ.նոյեմբերի 23
գ.Վերին Պտղնի

Հավելված 7
Կոտայքի մարզի Վերին Պտղնի
համայնքի ղեկավարի 2020թվականի
նոյեմբերի 23-ի N 225 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի «Վերին Պտղնի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 21-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2020 թվականի դեկտեմբերի 07-ին ժամը՝ 15:00-ին : Վերին Պտղնի համայնքապետարանի շենքում կկայանա հանրային բաց լսումներ՝ Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Վերին Պտղնի համայնքապետարանի պաշտոնական կայքում (verinptghni.am) հրապարակված Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել (verinptghni.kotayq@mta.gov.am) էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ:

Համայնքապետարանի աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060-517670 հեռախոսահամարով:

Վերին Պտղնի համայնքապետարան

Հավելված 2
Կոտայքի մարզի Վերին Պտղնի
համայնքի ղեկավարի 2020 թվականի
նոյեմբերի 23-ի N 223 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Վերին Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի «Վերին Պտղնի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 21-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2020 թվականի դեկտեմբերի 07-ին ժամը՝ 16:00-ին : Վերին Պտղնի համայնքապետարանի շենքում կկայանա հանրային բաց լսումներ՝ Վերին Պտղնի համայնքի տարածքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծի վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Վերին Պտղնի համայնքապետարանի պաշտոնական կայքում (verinptghni.am) հրապարակված Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել (verinptghni.kotayq@mta.gov.am) էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ:

Համայնքապետարանի աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060-517670 հեռախոսահամարով:

Վերին Պտղնի համայնքապետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ N224

ԳՈՀԱՐ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Գոհար Մելքումյանի դիմումը՝ **որոշում եմ**

1.Գոհար Մելքումյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում երկհարկանի բնակելի տան,ավտոտնակի և պարիսպապատման կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Գոհար Մելքումյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թ.նոյեմբերի 26
գ.Վերին Պտղնի